Սայաթ Նովա

Շատ սիրուն իս Շախաթայի

Էս դիվանին խիստ լավն է, օվ օր սովրի օղորմի ասի:
Հիմի գուզիմ թե հայեվար ասիմ: Ամեն աստուծ,
յիս՝ մըղդըսու վուրթի Արութինս,
պըստուց ինչրու յառսուն տար՛ին գլուխ դրի ամենան խաղին,
ամա սուրբ Կարապիտի կարողութենով սովրեցա քամանչեն ու չոնգուրն ու թամբուրեն:

Շատ սիրուն իս, Շախաթայի, ասողին՛ խար չիս անի.
Անջաղ գըցիս էշխի մեչը, յիդ կեհաս՝ քար չիս անի:

Էշխը հեստի կըրակ ունի՝ վո՞ւնց կու էրվի, վո՞ւնց կերթա.
Թեգուզ նընգիմ ծովի մեչը՝ հովնալու ճար չիս անի:

Բաս աշուղը վունց դիմանա էտ քու տըված կեծակուն,
Դու ինքնակալ թաքավուր իս՝ բեհուբազառ չիս անի:

Թե վուր սարերուն հանդիբիս, կու հալիս մումի նըման.
Թե վուր քաղաք տիղ հանդիբիս, կու քանդիս, վար չիս անի:

Իսկի բեհուբազար չունի Շախաթայի չասողը.
Է՞նդու համա, Սա՞յաթ Նովա, էհտիբար չիս անի: